

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՍՏԱՎՐՈՊՈԼ

Ստավրոպոլի և Բաքվի ռուսաց Եկեղեցու առաջնորդ Տ. Անտոնի եպիսկոպոսի հրավերով սույն թվականի դեկտեմբերի 11--14 օրերին հյուրաբար Ստավրոպոլում էր գտնըվում Ադրբեջանի հայոց թեմի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վարդան աբեղա Դիլանյանը և նույն եկեղեցու գործադիր մարմնի անդամ տիար Վոլոդյա Հարությունյանը:

Դեկտեմբերի 13-ին Ստավրոպոլի Սուրբ Անդրեաս առաքյալի անվան Մայր տաճարում, ի գլուխ շուրջ 100 քահանաների, հանդիսավոր պատարագ մատուցեց և քարոզեց Տ. Անտոնի եպիսկոպոսը: Քարոզի վերջում սրբական հայրը ողջունելով Ադրբեջանի հայոց թեմի պատվիրակության ներկայությունը եկեղեցում՝ նշեց, որ Հայ Առաքելական քույր Եկեղեցու ներկայացուցիչների բարեկամական այցը Ստավրոպոլ՝ Ռուս Պրավոսլավ Եկեղեցուն, հանդիսանում է գեղեցիկ մեկ արտահայտությունը երկու Եկեղեցիների վաղընջական բարեկամության և ավելի է սերտացնում Ադրբեջանի հայ և ռուս Եկեղեցիների միջև հաստատված եղբայրական կապերը:

Իր պատասխան խոսքում Տ. Անանիա եպիսկոպոսը, ողջունելով եկեղեցում հավաքված ռուս հավատացյալ բազմությանը, համառոտակի պատմեց նրանց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու մասին՝ նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին, հատկապես վերջին տասնամյակներին, Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի առաջնորդությամբ մեծ ծաղկում է ապրում և եղբայրական խաղաղասիրական ոգով հարաբերություններ մշակում քրիստոնեական քույր Եկեղեցիների, հատկապես Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ:

Երեք օր տևող սույն այցելությունը, որն անցավ եղբայրական ջերմ ու սրտագին մթնոլորտում, մեկ անգամ ևս դրսևորեց Ադրբեջանի հողի վրա գործող երկու Եկեղեցիների ձգտումը՝ էկումենիկ բարի հարաբերությունների ոգով ծառայելու իրենց ժողովուրդների մշակութային ու հոգևոր կարիքներին, ինչպես նաև աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության սրբական գործին:

Դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի հայոց թեմի պատվիրակությունը հոգեկան մեծ գոհունակությամբ և լավագույն տպավորություններով վերադարձավ Բաքու: